ՀԱՅԿ·ԿՈՍ·ՍՏՍԱ·ՀԱՅԿ

ԱՊՐԻԼ 2024

ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՆՑՈՒԴԱՐՁ

#4

Հայաստանի արհմիությունների
կոնֆեդերացիա

Բովանդակություն

Ողջույնի խոսք

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան մեկնարկել է կարճ տեսահոլովակների շարք

«Արհմիության անդամակցության բարձրացման շարժառիթները» թեմայով սեմինար Լեռնագործների, մետալուրգների և ոսկերիչների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության ներկայացուցիչների համար

Արևելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության ֆորումի 2024-2026թթ. ժամանակաշրջանի համար Հայաստանից պատվիրակների ընտրություն

«Հայաստան. Քաղաքացիական գագաթնաժողով 2024»-ին մասնակցություն

«Արհմիության անդամակցության բարձրացման շարժառիթները» թեմայով սեմինար «Էլեկտրաարհմիություն» արհեստակցական կազմակերպությունների, Կոմունալ-բնակարանային տնտեսության և ծառայությունների ոլորտի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունների ներկայացուցիչների համար

Հարգանքի տուրք Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին

«Անհատական և կոլեկտիվ աշխատանքային իրավահարաբերություններ» թեմայով սեմինար լրագրողների համար

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի հայտարարությունը աշխատանքի անվտանգության և առողջության համաշխարհային օրվա կապակցությամբ

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի պատասխանը ՀԱՄԿ-ի գրությանը եկամտային հարկի տարեկան հաշվարկ-հայտարարագիր ներկայացնելու պահանջի մասին

Բարի գալուստ,
«Արիմիութենական անցուդարձ» ամսագիր

«Արիմիութենական անցուդարձ» ամսագիրը հանդիսանում է Հայաստանում արիմիութենական առաջին էլեկտրոնային ամսագիրը, որի նպատակն է տարածել և հանրահռչակել Հայաստանի արիմիությունների կոնֆեդերացիայի (ՀԱՄԿ) կողմից յուրաքանչյուր ամսվա ընթացքում կատարած աշխատանքների մասին տեղեկատվությունը: Արիմիութենական առօրյան հարուստ է բազմազան միջոցառումներով, ծրագրերով, որոնք ուղղված են աշխատողների իրազեկմանը, աշխատանքային և դրա հետ կապված սոցիալական, տնտեսական, մասնագիտական իրավունքների ներկայացմանը, պաշտպանմանը և առաջ մղմանը:

Մենք վստահ ենք՝ այսօր ժամանակակից աշխարհում ամենազորեղ զենքը գիտելիքն է և տեղեկտավության տարածումը:

Հայաստանի արիմիությունների
կոնֆեդերացիայի աշխատակազմ

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան մեկնարկել է կարճ տեսահոլովակների շարք

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան մեկնարկել է արհմիությունների կարճ տեսահոլովակների շարք, որի նպատակն է իրազեկել հանրությանն արհմիությունների գործունեության և աշխատանքային իրավունքների վերաբերյալ:

Reels

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա's Reels



«Արհմիության անդամակցության բարձրացման շարժառիթները» թեմայով սեմինար Լեռնագործների, մետալուրգների և ոսկերիչների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության ներկայացուցիչների համար

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան «Սոլիդարիթի Սենթր» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության հետ համագործակցության շրջանակներում 2024 թվականի ապրիլի 12-ից մինչև 2024 թվականի ապրիլի 14-ը Ջերմուկում կազմակերպել է «Արհմիության անդամակցության բարձրացման շարժառիթները» թեմայով սեմինար Լեռնագործների, մետալուրգների և ոսկերիչների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության անդամների համար:

Արևելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության ֆորումի 2024-2026թթ. ժամանակաշրջանի համար Հայաստանից պատվիրակների ընտրություն

EASTERN PARTNERSHIP
CIVIL SOCIETY FORUM

Հայաստանում ԵՄ պատվիրակության և ՔՀՖ ԱԽ համակարգողների կարճ ցուցակների համընկման արդյունքում Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան ընտրվել է Արևելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության ֆորումի 5-րդ աշխատանքային խմբի անդամ 2024-2026թթ. ժամանակաշրջանի համար։

2024 թվականի ապրիլի 15-ին կայացած Արևելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության ֆորումի 2024-2026թթ. ժամանակաշրջանի համար Հայաստանից պատվիրակների ընտրությունների արդյունքներով 5-րդ աշխատանքային խմբում ընտրվել են նաև «Աուդիո-վիզուալ լրագրողների ասոցիացիա» ՀԿ-ն, «Շողեր միություն» սոցիալ-կրթական ՀԿ-ն։

EaP CSF
Working Group 5
Social & Labour Policies | Social Dialogue

«Հայաստան. Քաղաքացիական գագաթնաժողով 2024»-ին մասնակցություն

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան մասնակցել է «Նոր ժողովրդավարություն» հիմնադրամի Դանիական կոնսորցիումի կողմից կազմակերպված Քաղաքացիական գագաթնաժողովին, որի ընթացքում Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը մասնակցել է «Ո՞ւր գնանք այստեղից՝ անդրադառնալով Հայաստանում քաղաքացիական հասարակության մարտահրավերներին և նոր հնարավորություններին» պանելային քննարկմանը որպես բանախոս։ Գագաթնաժողովին մասնակցել են ավելի քան 150 մասնակից Դանիայի և Հայաստանի քաղաքացիական հասարակության ավելի քան 70 կազմակերպություններից։

«Արհմիության անդամակցության բարձրացման շարժառիթները» թեմայով սեմինար «Էլեկտրաարհմիություն» արհեստակցական կազմակերպությունների, Կոմունալ-բնակարանային տնտեսության և ծառայությունների ոլորտի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունների ներկայացուցիչների համար

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան «Սոլիդարիթի Սենթր» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության հետ համագործակցության շրջանակներում 2024 թվականի ապրիլի 20-ից մինչև 2024 թվականի ապրիլի 21-ը Ծաղկաձորում կազմակերպել է «Արհմիության անդամակցության բարձրացման շարժառիթները» թեմայով սեմինար «Էլեկտրաարհմիություն» արհեստակցական կազմակերպությունների, Կոմունալ-բնակարանային տնտեսության և ծառայությունների ոլորտի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունների ներկայացուցիչների համար։

Հարգանքի տուրք Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի և Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի անդամ ճյուղային հանրապետական միությունների ներկայացուցիչներն ապրիլի 24-ին այցելեցին Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիր՝ հարգանքի տուրք մատուցելու անմեղ նահատակների հիշատակին:

«Անհատական և կոլեկտիվ աշխատանքային իրավահարաբերություններ» թեմայով սեմինար լրագրողների համար

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան «Սոլիդարիթի Սենթր» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության հետ համագործակցության շրջանակներում 2024 թվականի ապրիլի 26-ից մինչև 2024 թվականի ապրիլի 28-ը Ծաղկաձորում կազմակերպել է «Անհատական և կոլեկտիվ աշխատանքային իրավահարաբերություններ» թեմայով սեմինար լրագրողների համար:

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի հայտարարությունը աշխատանքի անվտանգության և առողջության համաշխարհային օրվա կապակցությամբ

Աշխատանքի միջազգային կազմակերպության նախաձեռնությամբ յուրաքանչյուր տարի ապրիլի 28-ը նշվում է որպես աշխատանքի անվտանգության և առողջության համաշխարհային օր, որի նպատակն է նպաստել աշխատավայրում դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների կանխարգելմանը:

Աշխատանքի անվտանգության և առողջության 2024թ. համաշխարհային օրվա թեման է «Կլիմայի փոփոխության ազդեցությունը աշխատանքի անվտանգության և առողջության վրա» :

Կլիմայի փոփոխությունը զգալի ազդեցություն է ունենում աշխատանքի ոլորտի՝ հատկապես աշխատողների անվտանգության և առողջության վրա: Կլիմայի փոփոխության հետևանքով առաջացող մասնագիտական ռիսկերից են՝ ջերմային սթրեսը, ուլտրամանուշակագույն ճառագայթումը, օդի աղտոտվածությունը, խոշոր արդյունաբերական վթարները, վարակիչ հիվանդությունների աճը և քիմիական նյութերի ազդեցության ավելացումը:

Աշխատողների առողջ և անվտանգ աշխատանքի ապահովումը պետք է ուղղված լինի աշխատողների ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական բարեկեցության խթանմանը և պահպանմանը, առողջության վրա բացասական ազդեցություն ունեցող ռիսկերից պաշտպանությանը:

Աշխատավայրում անվտանգության և առողջության համակարգերի կիրառումը նպաստավոր է ոչ միայն աշխատողների, այլ նաև կազմակերպությունների տնտեսական զարգացման համար, քանի որ աշխատանքի վայրում տեղի ունեցած յուրաքանչյուր դժբախտ դեպք, որպես հետևանք, առաջ է բերում մեծ ֆինանսական ծախսեր, որոնք բազմակի անգամ գերազանցում են առողջ և անվտանգ աշխատանքի միջավայրի ապահովման միջոցառումների արժեքը:

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան միանում է աշխատանքի անվտանգության և առողջության համաշխարհային օրվան նվիրված Աշխատանքի միջազգային կազմակերպության նախաձեռնությանը և գտնում է, որ առողջ և անվտանգ աշխատանքային պայմանների արդյունավետ ապահովման համար պետական քաղաքականությունը պետք է ուղղված լինի աշխատողների կյանքի, առողջության և անվտանգության պահպանմանը, քանի որ առողջ և անվտանգ աշխատանքային պայմանները արժանապատիվ աշխատանքի կարևորագույն բաղադրիչներից են:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿՈՆՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ
ԷԼԵՆ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի պատասխանը ՀԱՄԿ-ի գրությանը եկամտային հարկի տարեկան հաշվարկ-հայտարարագիր ներկայացնելու պահանջի մասին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«____» _____ 20 թ.

No _____

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՆՖԵԴԵՐԱՑԻԱ»
ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ Է. ՄԱՆԱՍԵՐՅԱՆԻՆ

ՊԱՏՃԵՆԸ՝ ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ
ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ՏԻԿԻՆ Զ. ՄԵԼՔՈՒՄՈՎԱՅԻՆ

Ի պատասխան Ձեր 08.04.2024թ. N05-01/14 գրության

Հարգելի տիկին Մանասերյան

Հիմք ընդունելով ՀՀ հարկային օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասը և 307-րդ հոդվածը, իրազեկման կարգով հայտնում ենք հետևյալը:

ՀՀ հարկային օրենսգրքի 156-րդ հոդվածի 4.1-ին մասի համաձայն՝ նույն հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով սահմանված կարգով եկամտային հարկի տարեկան հաշվարկներ (հայտարարագրեր) չներկայացնող՝ ՀՀ ռեզիդենտ հանդիսացող ՀՀ քաղաքացիները (բացառությամբ հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ անչափահաս համարվող ֆիզիկական անձանց) մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա մայիսի 1-ը ներառյալ օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում եկամտային հարկի տարեկան հաշվարկներ (հայտարարագրեր):

Նույն մասի 1-ին կետին համապատասխան՝ մասնավորապես 2023 թվականի հաշվետու տարվա համար եկամտային հարկի տարեկան հաշվարկներ (հայտարարագրեր) ներկայացնում են՝

ա. 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված պետական ծառայության, համայնքային ծառայության և (կամ) հանրային պաշտոններ զբաղեցնող ՀՀ քաղաքացիները,

բ. ՀՀ ռեզիդենտ հանդիսացող ՀՀ քաղաքացիները, որոնք 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հանդիսանում են (հանդիսացել են) 2022 թվականի արդյունքներով մեկ միլիարդ դրամ և ավելի համախառն եկամուտ հայտարարագրած ՀՀ ռեզիդենտ առևտրային կազմակերպության մասնակից (բաժնետեր, փայատեր, անդամ),

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

գ. ՀՀ ռեզիդենտ հանդիսացող ՀՀ քաղաքացիները, որոնք «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված իրական շահառու են համարվում,

դ. ՀՀ ռեզիդենտ հանդիսացող ՀՀ քաղաքացիները, որոնք 2023 թվականի ընթացքում ստացել են 20 միլիոն դրամի չափով կամ ավելի փոխառություն:

Հաշվի առնելով վերոգրյալը, հայտնում ենք, որ օրենսգրքի 156-րդ հոդվածի 4.1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ 2023թ. հաշվետու տարվա համար եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու պարտավորություն ունեցող ՀՀ ռեզիդենտ հանդիսացող ՀՀ քաղաքացիները, այդ թվում՝ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով իրական շահառու հանդիսացող ՀՀ ռեզիդենտ ՀՀ քաղաքացիները, պարտավոր են օրենսգրքով սահմանված ժամկետում, բացառապես էլեկտրոնային եղանակով՝ «Ֆիզիկական անձանց էլեկտրոնային ծառայությունների միասնական համակարգ»-ի հայտարարագրման բաժնի միջոցով (https://self-portal.taxservice.am/sign-in/) հարկային մարմին ներկայացնել եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր):

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

X

Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Կատ.՝ ՎՄԸՎ հարկերի և պարտադիր վճարների
մեթոդաբանության թիվ 2 բաժին, հեռ. 060-844-646

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա
Հասցե՝ Վազգեն Սարգսյան 26/3
Հեռ.՝ +37410 583682
www.hamk.am
hamk@hamk.am